ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանի դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 2002-2003 թթ. ուսումնական տարվա ամավերջյան հանդիսությունը: Ճեմարանի 123 ուսանողներից այս տարի ավարտական լսարանը տվեց 19 շրջանավարտ:

Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանի բացման խոսքից հետո, ավանդույթի համաձայն, Ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյանը ներկայացրեց ընթացիկ տարվա գործունեությունը, ապա ներկաներին իր օրհնության խոսքն ու պատգամն ուղղեց Վեհափառ Հայրապետը:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, որ տարիներ ի վեր եղել է Հայաստանի միակ հոգևոր բարձրագույն ուսումնական հաստատությունը, անցած տարվանից կառավարության որոշմամբ ճանաչվեց որպես բարձրագույն ուսումնական հաստատություն: Այս առիթով Ճեմարանի տեսուչը ներկայացրեց այն նոր ձեռնարկումները, որ իրականացվել են Ճեմարանում: Ստեղծվել են մասնագիտական չորս ամբիոններ՝ աստվածաբանության, եկեղեցագիտության, լեզվաբանության, պատմության և իմաստասիրության, որոնց շնորհիվ համապատասխան առարկաների ուսուցումը դառնում է առավել հիմնավոր և համալսարանական չափանիշներին համապատասխան:

Ճեմարանի աշխատանքները գոհացուցիչ համարեց նաև Նորին Սրբությունը և վստահություն հայտնեց, որ առաջիկայում ևս պատմական Ճեմարանը կարձանագրի նորանոր հաջողություններ:

Ամավերջյան հանդիսության գեղեցիկ ավանդույթներից է նաև ուսման առաջադիմությամբ ու կարգապահությամբ աչքի ընկած ուսանողներին նվերների հանձնումը: Այս անգամ Վեհափառ Հայրապետը մրցանակներ հանձնեց յուրաքանչյուր լսարանից երեքական ուսանողի: Մրցանակներ էին սահմանվել նաև կատարյալ վարքի, ինչպես նաև մամուլին լավագույն թղթակցության համար:

Հանդիսության ընթացքում ճեմարանցիները, ինչպես միշտ, ներկայացան նաև գեղարվեստական ծրագրով:

*

* *

Հանդիսության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը հանձնեց ևս մեկ պարգև: Նորին Սրբությունը Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանին փոխանցեց 1700-ամյակի ոսկյա հուշամեդալ, որ Անգլիայի հայոց թեմի առաջնորդանիստ Ս. Մարգիս եկեղեցու վարչության կողմից շնորհվել է Սրբազան Հորը՝ թեմին բերած երկարատև ծառայության համար: